ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով (նախկինում՝ Բյուրական) համայնքի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների ամրակայման և դրա տարածքների բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի մայիսի 17-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32»*** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հոկտեմբերի 19-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով (նախկինում՝ Բյուրական) համայնքի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների ամրակայման և դրա տարածքների բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների պատշաճ կատարման համար Կատարողի կողմից առաջարկվել է պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 30 օրացույցային օրով:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի Հավելված թիվ 1-ում Աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2018 թ.-ի նոյեմբերի 19-ը:

Փոփոխության հիմնավորում N 1: Հուշարձանի բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացքում մանրակրկիտ հետազոտություններ կատարելու և տվյալների ճշգրիտ հավաքագրման անհրաժեշտություն:

Փոփոխության հիմնավորում N 2: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ :

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «19» 10 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 17-ին կնքված ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով (նախկինում՝ Բյուրական) համայնքի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների ամրակայման և դրա տարածքների բարեկարգման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/32» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում աշխատանքի կատարման ժամկետը՝ **«20 հոկտեմբեր 2018 թ.»** բառերը փոխարինել **«19 նոյեմբեր 2018 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ գեղարքունիքի մարզ, գ.
Կառավարական շենք N 2,	Կարմիրգյուղ
հեռ.՝ (011) 58-51-78	հեռ.՝ 095 000 867
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011017713	էլ. հասցեն՝ haferdgas@mail.ru
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	ՀՎՀՀ 08417097, հ/հ 220083334700000
գործառնական վարչությունում	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Գեղարքունիք մ/ճ
Ա. Մուրադյան	Հ. Գասպարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ